ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի խմբագրություն.

Վերջերս ես կարդացի «Արշակ Երկրորդ» վեպը (Երևան, 1977)։ Ինչպես հայտնի է, պատմական անցյալը և մանավանդ սեփական ժողովրդիդ պատմությունը միշտ էլ հետաքրքրություն և հմայք ունի։ Հաճույքով բացեցի դիրքը, սակայն զարմանքով փակեցի այն։ Վեպը թողնում է տարօրինակ տպավորություն։ Հեղինակ Պերճ Զեյթունցյանը, խոսելով հայ ժողովրդի պատմության IV դարի իրադարձությունների և մասնավորապես Արշակ II-ի գործունեության մասին, զարմանալի կերպով անտեսում է պատմական փաստերը։ Բայց ինչո՞ւ Հեղինակը, ըստ երևույթին, կարծում է, որ գրողը իրավունք ունի փոխելու պատմությունը՝ ինչպես կամենա։

Դիմելով «Հանդեսի» խմբագրությանը, խնդրում եմ պարզաբանել, թե ճի՞շտ է, արդյոք, երբ գրողը հակասության մեջ է մտնում պատմական իրականության հետ։

Այդ հարցը ինձ հետաքրքրում է նաև աշխատանքի բերումով. ես աշխատում եմ որպես Գրքասերների ընկերության Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար և կուզենայի պատասխան տալ բազմաթիվ ընթերցողների, որոնք հաճախ ինձ դիմում են այդ գրքի կապակցությամբ։

Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Խմբագրության կողմից.—*Ընդառաջելով ընթերցողների ցանկությանը, «Հանդեսի» խմբագրությունը և Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը մտադիր են նամակում բարձրացված հարցի վերաբերյալ կազմակերպել քննարկում պատմաբանների, գրականագետների, գրողների և ընթերցողների մասնակցությամբ։*